



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

**Արձանագրություն № 8**

Արևելագիտության ֆակուլտետի գիտխորհրդի 2018թ հունիսի 26-ի նիստի  
Նիստին ներկա էին գիտխորհրդի 25 (քսանհինգ) անդամներից 16-ը:

Օրակարգում՝

1. Թյուրքագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնի ընտրություններում Քնարիկ Միրզոյանի թեկնածության հարցը
2. Արաբագիտության ամբիոնի ափստենտ Գայանե Մկրտումյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու հարցը
3. ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի շրջանավարտ Ռուբեն Նիկողոսյանի «Պահլավական ուսումնասիրություններ» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը

Լ Ս Ե Յ Ի Ն – Թյուրքագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնի ընտրություններում Քնարիկ Միրզոյանի թեկնածության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը, որը ներկայացրեց թեկնածուի անձնական գործը, Թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ալ. Սաֆարյանը խոսեց թեկնածուի մասնագիտական կարողությունների և հմտությունների մասին՝ բարձր գնահատելով նրա գիտելիքները և ներուժը թյուրքագիտության ոլորտում առկա խնդիրները հաղթահարելու համար: Նիստը նախագահողը առաջարկեց ստեղծել հաշվիչ հանձնաժողով և սկսել քվեարկությունը: Առաջարկվեցին Քոչարյան Հայկի, Հարությունյան Սվետլանայի, և Բաղիկյան Ջեմմայի թեկնածությունները: Հաշվիչ հանձնաժողովի վերոհիշյալ կազմը հաստատվեց միաձայն: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Հ. Քոչարյան:

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Քոչարյանի հաղորդումը փակ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

Խորհրդի 25 անդամներից, ներկա էին 16-ը և քվեարկությանը մասնակցել են 16-ը:

Բաժանվել է 16 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 16 քվեաթերթիկ:

Արաբագիտության ամբիոնի դոցենտի դոցենտի պաշտոնում Քնարիկ Միրզոյանի թեկնածությանը քվեարկել են՝

դեմ - 0

անվավեր քվեաթերթիկ - 1

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով Քնարիկ Միրզոյանը ընտրվել է արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ (միաձայն), որի համաձայն Քնարիկ Միրզոյանը ընտրվել է թյուրքագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Լ Ս Ե Ց Ի Ն – Արաբագիտության ամբիոնի ասիստենտ Գայանե Մկրտումյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը, որը ներկայացրեց թեկնածուի անձնական գործը, արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր Դ. Հովհաննիսյանը խոսեց թեկնածուի մասնագիտական կարողությունների և հմտությունների մասին արաբագիտության ոլորտում առկա խնդիրները հաղթահարելու համար:

Նիստը նախագահողը առաջարկեց ստեղծել հաշվիչ հանձնաժողով և սկսել քվեարկությունը: Առաջարկվեցին Քոչարյան Հայկի, Հարությունյան Սվետլանայի, և Բաղիկյան Ջեմմայի թեկնածությունները: Հաշվիչ հանձնաժողովի վերոհիշյալ կազմը հաստատվեց միաձայն: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Հ. Քոչարյան:

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Քոչարյանի հաղորդումը փակ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

Խորհրդի 25 անդամներից, ներկա էին 16-ը և քվեարկությանը մասնակցել են 16-ը: Բաժանվել է 16 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 16 քվեաթերթիկ:

Արաբագիտության ամբիոնի դոցենտի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու հարցում Գայանե Մկրտումյանի թեկնածությանը քվեարկել են՝

կողմ - 15

դեմ - 0

անվավեր քվեաթերթիկ - 1

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով որոշվեց երաշխավորել Գայանե Մկրտումյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ,

2. հաշվի առնելով, որ արաբագիտության ամբիոնի ասիստենտ պ.գ.թ. Գայանե Մկրտումյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001 թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին՝

ա) երաշխավորել արաբագիտության ամբիոնի ասիստենտ պ.գ.թ. Գայանե Մկրտումյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչում շնորհելու համար

բ) միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ արաբագիտության ամբիոնի ասիստենտ պ.գ.թ. Գայանե Մկրտումյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Լ Ս Ե Ց Ի Ն – ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի շրջանավարտ Ռուբեն Նիկողոսյանի «Պահլավական ուսումնասիրություններ» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը, գիտքարտուղար Հ. Քոչարյանը, որը ներկայացրեց թենկաձուի անձնական գործը, Թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ալ. Սաֆարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը, մեթոդ խորհրդի նախագահ Ք. Միրզոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել արևելագիտության ֆակուլտետի ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի շրջանավարտ Ռուբեն Նիկողոսյանի «Պահլավական ուսումնասիրություններ» մենագրությունը հրատարկության, խմբագիր հաստատել ԵՊՀ իրանագիտության դասախոս Ա. Տոնոյանին:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

Իսկականի հետ ձիշտ է՝

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ